# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.08.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2019/131**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2019թ. թիվ 26/26-1/12701-2019 գրությամբ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1358-2019 գրության հիման վրա, 30.07.2019թ. թիվ 26/26-1/12701-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/131 ընթացակարգի շրջանակներում 05.08.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ 11-րդ և 17-րդ չափաբաժիններով Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի կողմից թյուրիմացաբար առաջարկվել է միավորի գին, որը հիմք է հանդիսացել հրաժարվել նշված չափաբաժիններից:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1358-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները սահմանված կարգով ծանուցվեցին երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը չի ներկայացրել (ընդհանրապես փաստաթուղթ չի ներկայացվել): Փոխարենը մասնակցի կողմից ներկայացվել է գրություն, համաձայն, որի Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը հրաժարվում է նշված չափաբաժիններից, քանի որ թյուրիմացաբար առաջարկվել է միավորի գներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/131 ընթացակարգի շրջանակներում 05.08.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2019/131 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/131 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանն Ընթացակարգի 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 09.07.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը ներկայացրել է գրություն, որի համաձայն՝ 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով հրաժարվել է հետագա մասնակցությունից:

**<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2019թ. թիվ 26/26-1/12701-2019

գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1358-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***<u>Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե</u>*** ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.***<u>հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանն Ընթացակարգի 11-րդ և

17-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 09.07.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 09.07.2019թ. գրությամբ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4 ծածկագրով մրցույթի 11-րդ և 17-րդ չափաբաժիններով թյուրիմացաբար առաջարկել է միավորի գին, որի պատճառով հրաժարվում է նշված չափաբաժիններից:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին 19.07.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով հրաժարման վերաբերյալ գրությունը մերժել է Ա/Ձ-ի հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե *հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Այսպիսով՝ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը Ընթացակարգի 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 09.07.2019թ. գրությամբ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ուստի արձանագրում եմ, որ վերջինս թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, հետևաբար առկա են Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2019թ. թիվ 26/26-1/12701-2019 գրությամբ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**